



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԷՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ  
 ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ**

Երկուշաբթի, 10 Սեպտեմբերի յետմիջօրեին, Ազգային Առաջնորդարան այցելեց Հայ Աւետարանական Համայնքը ներկայացնող պատուիրակություն մը եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Պատուիրակությունը կը գլխաւորէին Հայ Աւետ. Միութեան նախագահ Վերապատուելի Ռան Թովմասեան, Միութեան Հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեան, իսկ անդամներն էին Վեր. Տիգրան Շանլեան, Վեր. Հապիպ Ալաճաճի, Վեր. Յովհաննէս Մելքոնեան, Պատուելի Հրակ Գարակեօզեան եւ Տեարք Հերըլտ Տեմիրճեան եւ Չաւէն Խանճեան: Առաջնորդ Սրբազանին կողքին ներկայ էին Կրօնական Ժողովի ատենապետ եւ փոխ ատենապետ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Կիւլիմեան, Ազգային Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տեր Սկրտիչեան եւ գանձապահ Տիար Վահան Պզտիկեան:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց յարգելի հիւրերը եւ ընդհանուր գիծերու մէջ անոնց ներկայացուց Ազգային Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տարուող աշխատանքի դաշտերը, ծանրանալով քրիստոնէական դաստիարակութեան գործին վրայ, որ տեղի կ'ունենայ Ս. Գրային սերտողութեանց պահերով, կիրակնօրեայ դպրոցներու յարկին տակ ու վարժարաններու մէջ կրօնի դասաւանդումով:

Առաջին հերթին խօսք առին Վեր. Թովմասեան եւ Վեր. Մաթոսեան, ապա նաեւ միւս հիւրերը: Անոնք խնդակցութիւն յայտնեցին Ազգային Առաջնորդարանի նոր շէնքի ծրագիրին ամբողջացման համար եւ փոխանցեցին իրենց շնորհաւորանքը: Անոնք վեր առին բարեկամութեան ու գործակցութեան այն մթնոլորտը, որ հետեւողական կերպով կ'աճի զոյգ յարանուանութեանց միջեւ: Անոնք նաեւ դրուատիքով խօսեցան Առաջնորդ Սրբազանին եկեղեցաշէն ու ժողովրդանուէր ծառայութիւններուն մասին, շեշտելով, որ այդ բոլորը կը կատարուին քրիստոնէական սիրոյ, հարազատներու եւ անկեղծութեան մթնոլորտին մէջ: Անոնք նաեւ գոհունակութեամբ արտայայտուեցան հասարակական հարցերու մէջ ստեղծուած համանման ու միակամ մթնոլորտին համար, որմէ բարիք կը բխի:

Հանդիպումի աւարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում, ապա, հիւր պատուիրակությունը շրջապատոյտ մը կատարեց Ազգ. Առաջնորդարանի շէնքին մէջ ու ծանօթացաւ աշխատանքի տարբեր

բաժանմունքներուն: Հանդիպումը վերջ գտաւ գործակցութիւնն ու սրտակցութիւնը զարգացնելու կամքի արտայայտութեամբ:

## **DELEGATION FROM THE ARMENIAN EVANGELICAL UNION VISITS THE PRELACY**

On the afternoon of Monday, September 10, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed a delegation of representatives from the Armenian Evangelical Union to the Prelacy headquarters.

The delegation was comprised of Rev. Ron Tovmassian, President of the Armenian Evangelical Union, Rev. Joe Matossian, Minister of the Union, Rev. Dikran Shanlian, Rev. Habib Alajaji, Rev. Hovannes Melkonian, Rev. Hrag Karagozian, Mr. Harold Demirjian, and Mr. Zaven Khanjian. Also participating in the meeting were Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, Religious Council Chair and Vice-Chair respectively, Executive Council Vice-Chair Dr. Hagop Der Megerdichian, and Treasurer Mr. Vahan Bezdikian.

The meeting began with the Prelate presenting the guests with a brief outline of the endeavors of the Prelacy and its affiliated bodies, focusing on the activities of the Christian Education Department which encompasses Bible study sessions and religious education in Sunday Schools as well as day schools. The guests congratulated the Prelate on the new headquarters and expressed appreciation for the close collaboration that exists between the two Churches.

The meeting concluded with the exchange of mementos and with the guests receiving a tour of the headquarters to become more closely familiarized with the various departments of the Prelacy.